

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի ԿՈՂՄԻՑ
ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

15.03.17թ.

1. Համաձայն «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի» արժեթղթավորման հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամի/ կառավարիչ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի թիվ Կ/2 որոշման՝ Հիմնադրամը 2017 թվականի մարտի 14-ին կատարեց դրամային և դոլարային պարտատոմսերի արժեկտրոնի վճարում և մայր գումարի մասնակի մարում ներդրողներին:

- **Դրամային պարտատոմսերի արժեկտրոն:** Հիմնադրամը թողարկված ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար հաշվարկել և վճարել է 4,645,566.60 դրամ գումարի չափով արժեկտրոն՝ հիմք ընդունելով մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկված արժեկտրոնը 104.10 դրամ:
- **Դոլարային պարտատոմսերի արժեկտրոն:** Թողարկված մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկվել է 0.6477 ԱՄՆ դոլար արժեկտրոն, որը, հիմք ընդունելով ԿԲ պաշտոնական կայքում 13.03.2017թ. հրապարակված 485.84 փոխարժեքը, համարժեք է 314.679 դրամին, իսկ մինչև տասնորդական կլորացման արդյունքում՝ 314.70 դրամին: Հիմնադրամը թողարկված ընդհանուր 11,328 հատ դոլարային պարտատոմսերի համար վճարել է 3,564,921.60 դրամ գումարի չափով արժեկտրոն:
- **Դրամային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2016 թվականի դեկտեմբերի 14-ից մինչև 2017 թվականի մարտի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 56,738,994.20 դրամ վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/03/2017թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել են 67,233,326.70 դրամ, որը հաշվարկված 4,645,566.60 դրամ արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 62,587,760.10 դրամ: Ստացված գումարը, որի հաշվին պետք է կատարվի պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում ավելին է, քան վճարման ենթակա 56,718,830.50 դրամը, որը ստացվել է 56,738,994.20 դրամը նվազեցնելով նախորդ վճարման օրը վճարման ենթակա գումարից ավել վճարված մասը՝ 20,163.70 դրամը: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և հաջորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնորդական կլորացման ամհրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 56,718,830.50 դրամը ավելացվել է 45,441.50 դրամով, և մնացորդ

գումարը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը¹: **Հիմնադրամը մեկ պարտատոմսի համար կատարել է 1,272 դրամ, իսկ ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար՝ 56,764,272 դրամ մասնակի մարում:** Արդյունքում՝ Հիմնադրամը կատարել է 45,441.50 դրամ գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի ավել մարում, քան հաշվարկվել է (մեկ պարտատոմսի համար՝ 1.02 դրամ):

Մատչելի միջոցների հաշվարկը և բաշխումը ներկայացված է Հավելված 1-ում, իսկ Հիմնադրամին փաստացի կատարված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները՝ Հավելված 2-ում:

- **Դոլարային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2016 թվականի դեկտեմբերի 14-ից մինչև 2017 թվականի մարտի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 103,290.08 ԱՄՆ դոլար վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/03/2017թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել են 123,974.87 ԱՄՆ դոլար, որը հաշվարկված 7,337.15 դոլար արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 116,637.72 դոլար: Ստացված գումարը, որի հաշվին պետք է կատարվի պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում ավելին է, քան վճարման ենթակա 103,309.64 դոլար գումարը, որը ստացվել է 103,290.08 դոլարին ավելացնելով նախորդ վճարման օրը վճարման ենթակա գումարի չվճարված մասը՝ 19.56 դոլարը: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և հաջորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնհազարերորդական կլորացման ամիրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 103,309.64 դոլարը ավելացվել է 1.72 դոլարով, և մնացորդ գումարը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը²: **Հիմնադրամը մեկ պարտատոմսի համար կատարել է 9.12 ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր 11,328 հատ պարտատոմսերի համար՝ 103,311.36 ԱՄՆ դոլար մասնակի մարում:** Արդյունքում՝ Հիմնադրամը կատարել է 1.72 ԱՄՆ դոլար գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի պակաս մարում, քան հաշվարկվել է (մեկ պարտատոմսի համար՝ 0.02 ցենտ):

2. Պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում 2,776 դրամ անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 1,504 դրամ անվանական արժեքով պարտատոմսերով,

¹ Վճարման ենթակա 56,718,830.50 դրամ գումարը ճշգրտվել է այնպիսի ամենափոքր գումարով, որի պարագայում պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում մեկ պարտատոմսի հաջորդ եռամսյակի համար վճարվելիք արժեկտրոնը կլինի 0.1 դրամի ճշտությամբ:

² Վճարման ենթակա 103,309.64 դոլար գումարը ճշգրտվել է այնպիսի ամենափոքր գումարով, որի պարագայում պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում մեկ պարտատոմսի հաջորդ եռամսյակի համար վճարվելիք արժեկտրոնը կլինի 0.0001 դոլարի ճշտությամբ:

իսկ 30.48 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 21.36 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերով:

3. 2017 թվականի մարտի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված 44,626 հատ դրամային պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է **67,117,504.0** դրամ:
4. 2017 թվականի մարտի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված դոլարային 11,328 հատ պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է **241,966.08** ԱՄՆ դոլար:
5. Պարտատոմս/Ակտիվ հարաբերակցությունը դրամային և դոլարային պարտատոմսերի համար կազմում է համապատասխանաբար 57.5% և 65.7%: Ընդ որում 2017 թվականի մարտի 14-ի դրությամբ դրամային վարկերի քանակը 149 է 116,780,083.0 դրամ մնացորդային արժեքով, իսկ դոլարային վարկերի քանակը 167 է 368,142.79 ԱՄՆ դոլար մնացորդային արժեքով:
6. 2017 թվականի հունիսի 14-ին Հիմնադրամը կվճարի մեկ դրամային պարտատոմսի համար 56.40 դրամ արժեկտրոն, իսկ մեկ դոլարային պարտատոմսի համար 0.4539 ԱՄՆ դոլար արժեկտրոն:

Տիգրան Կարապետյան



Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ՝
«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

15 մարտի, 2017թ.

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ
15.03.17թ. էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

14.03.2017թ. ժամը 00.00 դրությամբ դրամային և դոլարային պարտատոմսերի վճարման համար
 Մատչելի միջոցների հաշվարկ

	Դրամային	Դոլարային
Դրամական ներհոսք 14/12/16 - 14/03/17 ժամանակաշրջանի ընթացքում		
Հիմնադրամի կողմից ստացված վարկի մարումներ	56,738,994.20	103,290.08
Հիմնադրամի կողմից ստացված տոկոսագումարներ	7,091,821.60	17,595.51
Հիմնադրամի կողմից ստացված տույժեր, տուգանքներ	3,709,003.20	5,780.83
Հիմնադրամի կողմից ստացված այլ վճարներ	632,030.00	-
Ընդամենը ներհոսք	68,171,849.00	126,666.42
Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/03/2017թ. հաշվեգրված՝ կանոնադրությամբ նախատեսված ծախսեր		
Կառավարման վարձ	342,244.4	930.0
Ակտիվների սպասարկման վարձ	261,241.6	767.00
Շուկա ստեղծողի վճար	76,365.5	212.8
Պարտատոմսերի սեփականատերերի գործակալի վճար	93,939.7	238.89
Պարտատոմսերի ցուցակման և պահպանման վճար	95,012.0	192.89
Արժեթղթերի պահառության վճար	10,841.8	29.9
ԱՄՆ ՄՁԳ երաշխավորության վճար	58,877.4	181.01
Աուդիտի վճար	-	-
Բանկային հաշիվների սպասարկման ծառայությունների վճար	-	139.01
Ընդամենը կատարված և հաշվեգրված ծախսեր (նվազեցումներ)	938,522.3	2,691.55
Մատչելի միջոցներ 14/03/17թ. դրությամբ	67,233,326.7	123,974.87

Մատչելի միջոցների բաշխումը

	Դրամային	Դոլարային
Մատչելի միջոցներ 14/03/17թ. դրությամբ	67,233,326.70	123,974.87
Արժեկտրոնի վճարում բոլոր պարտատոմսի համար	4,645,566.60	7,337.15
Արժեկտրոնի վճարում 1 պարտատոմսի համար	104.10	0.6477
Պարտատոմսերի քանակ	44,626	11,328
Մատչելի միջոցներ արժեկտրոնների վճարումից հետո	62,587,760.10	116,637.72
Հաշվարկված վճարման ենթակա պարտատոմսի մայր գումար	56,718,830.50	103,309.64
Վարկառուների կողմից փաստացի կատարված վարկի մարումներ	56,738,994.20	103,290.08
Նախորդ Վճարման օրը վճ. ենթակա գումարից չվճարված կամ ավել վճարված մասը	- 20,163.70	19.56
Պարտատոմսի վճարման ենթակա մայր գումար	56,718,830.50	103,309.64
Ճշգրտում կապված մեկ պարտատոմսի անվ. արժեքի կլորացման հետ	45,441.50	1.72
Պարտատոմսի մայր գումարի վճարում	56,764,272.00	103,311.36
Մայր գումարի վճարում 1 պարտատոմսի համար	1,272.00	9.1200
Մնացորդային սպրեդի հաշվի համալրում	5,823,488.10	13,326.36

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ
15.03.17թ. էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

2016թ դեկտեմբերի 14-ից մինչև 2017 մարտի 14-ը փաստացի կատարված և Հիմնադրամին փոխանցված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները տվյալ ժամանակաշրջանի համար կանխատեսվածից:

ՈՒՎԿ	Վարկառ. կողմից փաստացի մարում	Հետգնված վարկերը *	Ընդամենը փաստացի մարում	Սկզբնական գրաֆիկով սահմանվ. մարում	Շեղում գրաֆիկով սահմանվ.	Ազդագրում կանխատես. մարում ³	Շեղում ազդագրում կանխատես.
ԴՐԱՄ							
ՔԱՐԴ ԱզրոԿրեդիտ	8,869,296	14,051,743	22,921,039	10,735,933	113.5%	10,303,483	122.5%
Գլոբալ Կրեդիտ	8,801,299	0	8,801,299	10,515,904	-16.3%	9,408,847	-6.5%
Գառնի Ինվեստ	2,273,009	0	2,273,009	3,769,718	-39.7%	3,140,792	-27.6%
Նոր Հորիզոն	5,528,780	0	5,528,780	4,464,115	23.8%	4,060,850	36.1%
Կամուրջ	17,214,867	0	17,214,867	23,658,120	-27.2%	22,333,582	-22.9%
ԸՆԴԱՄԵՆԸ	42,687,251	14,051,743	56,738,994	53,143,791	6.8%	49,247,554	15.2%
ԴՈԼԱՐ							
Գլոբալ Կրեդիտ	25,581.4	8,641.8	34,223.2	28,933.7	18.3%	29,643.6	15.4%
Նոր Հորիզոն	44,128.9	674.0	44,802.9	73,106.6	-38.7%	68,747.7	-34.8%
Կամուրջ	24,264.0	0.0	24,264.0	31,809.7	-23.7%	31,015.0	-21.8%
ԸՆԴԱՄԵՆԸ	93,974.3	9,315.8	103,290.1	133,850.0	-22.8%	129,406.3	-20.2%

³ Ներառում է կանխատեսված՝ վարկերի վաղաժամկետ մարումները, դեֆոլտները և դեֆոլտ վարկերի վերականգնումները:

* Հիմնադրամը, առաջնորդվելով և հաշվի առնելով իր և Նախաձեռնողների միջև հարաբերությունները կարգավորող պայմանագրային և օրենսդրական մի շարք դրույթներ, որոնք են՝

- «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա Նախաձեռնողի կողմից «Ակտիվների առուվաճառքի և սպասարկման պայմանագրով» տրված երաշխավորություններն ու հավաստիացումները (այդ թվում՝ վարկերի որակի վերաբերյալ), ինչպես նաև նշված պայմանագրով Նախաձեռնողի կողմից ստանձնած՝ համապատասխան վարկերը հետ գնելու պարտավորությունը,
- Հիմնադրամի կողմից թողարկված ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման ազդագրի 58-59-րդ էջերում շարադրված դեֆոլտ վարկերի սպասարկման հետ կապված պայմանները,
- Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով և 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ սպասարկողի և Հիմնադրամի կառավարչի՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերից ելնելով գործելու, իրենց իրավունքները և ներդրողների նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով իրականացնելու և կատարելու ֆիդուցիար պարտականությունը),

ինչպես նաև հաշվի առնելով, որ կան էական խնդիրներ Նախաձեռնողի կողմից վաճառված և սպասարկվող ժամկետանց (դեֆոլտ) վարկերի հետ, որոնք կարող են վտանգել ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերը, «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի, «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ կնքել է «Ակտիվների հետգնման պայմանագրեր»:

Համաձայն «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 01.02.17թ. կնքված պայմանագրի՝ հետ են գնվել 674 ԱՄՆ դոլար ընդհանուր մնացորդով 1 (մեկ) ժամկետանց վարկ, որի համար Հիմնադրամին վճարվել է 674 ԱՄՆ դոլար վարկի մնացորդ գումարը և 13,335 ՀՀ դրամ հաշվարկված տոկոսագումարը և տույժերը:

Համաձայն «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և Հիմնադրամի միջև 01.02.17թ. կնքված պայմանագրի՝ հետ են գնվել 14,051,743 դրամ ընդհանուր մնացորդով 9 (ինը) ժամկետանց վարկեր, որոնց համար Հիմնադրամին վճարվել է 14,051,743 դրամ վարկերի մնացորդ գումարը և 3,041,505.20 դրամ հաշվարկված տոկոսագումարները և տույժերը:

Համաձայն «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և Հիմնադրամի միջև 22.02.17թ. կնքված պայմանագրի՝ հետ են գնվել 8,641.78 ԱՄՆ դոլար ընդհանուր մնացորդով 2 (երկու) ժամկետանց վարկեր, որոնց համար Հիմնադրամին վճարվել է 8,641.78 ԱՄՆ դոլար վարկերի մնացորդ գումարը և 1,611,507.50 դրամ հաշվարկված տոկոսագումարները և տույժերը:

Պարտատոմսերի թողարկման օրվանից /14.12.2015թ./ մինչև 2017թ մարտի 14-ը փաստացի կատարված և Հիմնադրամին փոխանցված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները տվյալ ժամանակաշրջանի համար կանխատեսվածից:

ՈՒՎԿ	Վարկառ. կողմից փաստացի մարում	Հետգնված վարկերը	Ընդամենը փաստացի մարում	Սկզբնական գրաֆիկով սահմանվ. մարում	Շեղում գրաֆիկով սահմանվ.	Ազդագրում կանխատես. մարում	Շեղում ազդագրում կանխատես.
ԴՐԱՄ							
ՔԱՐԴ ԱզրոԿրեդիտ	111,486,675	19,160,020	130,646,695	116,316,563	12.3%	116,690,508	12.0%
Գլոբալ Կրեդիտ	52,405,710	0	52,405,710	46,407,493	12.9%	49,902,160	5.0%
Գառնի Ինվեստ	32,841,131	0	32,841,131	30,263,584	8.5%	30,769,899	6.7%
Նոր Հորիզոն	22,087,217	0	22,087,217	19,521,589	13.1%	20,268,962	9.0%
Կամուրջ	141,116,302	0	141,116,302	107,932,973	30.7%	113,545,245	24.3%
ԸՆԴԱՄԵՆԸ	359,937,035	19,160,020	379,097,055	320,442,203	18.3%	331,176,773.9	14.5%
ԴՈԼԱՐ							
Գլոբալ Կրեդիտ	180,671.3	15,353.7	196,024.9	135,809.7	44.3%	148,013.6	32.4%
Նոր Հորիզոն	315,385.9	171,007.4	486,393.3	351,862.6	38.2%	383,861.7	26.7%
Կամուրջ	208,414.0	0.0	208,414.0	180,298.7	15.6%	189,276.0	10.1%
ԸՆԴԱՄԵՆԸ	704,471.1	186,361.1	890,832.2	667,971.0	33.4%	721,151.3	23.5%